ԲԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՊՈՂՈՍ ԱԲԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(Փետրվար 12)

«Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս եւ արբցէ:
Որ հաւատայ յիս՝ գետք յորովայնէ
նորա բխեսցեն ջրոց կենդանութեան»
(Յովհ. Է. 37-38):

Սիրելի քույրեր եւ եղբայրներ,

Քիչ առաջ ավետարանական ընթերցվածի միջոցով մեր ականջներում հնչեց Տիրոջ պատգամը. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա եւ խմի»: Փորձենք հասկանալ, թե ինչ ծարավ ունեին մարդիկ եւ ինչ պիտի խմեին Քրիստոսից, ինչի մասին էր խոսքը:

Այս պատգամը Հիսուս մարդկանց տալիս է Տաղավարահարաց կոչվող տոնի ժամանակ, որին Ինքը եւս ունկնդիր էր: Նախ եւ առաջ տեսնենք, թե ինչ էր իրենից ներկայացնում այդքան մեծ շուքով հիշատակվող այդ տոնակատարությունը:

Հրեաները, երբ քառասուն տարի անապատում դեգերելուց հետո ազատագրվում են գերությունից, սկսում են ամեն տարի մեծաշուք հանդեսներով տոնել այդ օրը՝ այն անվանելով Տաղավարահարաց: Տոնախմբությունը կատարում էին Երուսաղեմ քաղաքում, որը տեւում էր ութ օր: Ամեն առավոտ ժողովրդի բազմությունը գնում էր Սելոամ կոչված ավազանի մոտ՝ այնտեղից ջուր խմելու, որի ընթացքում արտասանում էին Եսայիի մարգարեությունից հետեւյալ հատվածները. «Ով բոլոր ծարավածներ, գնացեք ջրի» (Ես. ԾԵ. 1), «Եւ ուրախությամբ ջուր վերցրեք փրկության աղբյուրներից» (Ես. ԺԲ. 3): Իսկ այնուհետեւ քահանան ոսկե սափորի մեջ ավազանից ջուր լցնելով՝ ժողովրդին առաջնորդում է դեպի տաճար եւ սափորով ջուրը լցնում ողջակեզի սեղանի վրա: Այս ամենը հիշատակությունն էր այն դրվագի, երբ Մովսես մարգարեն ժայռից ջուր բխեցնելով, հագեցնում է ժողովրդի ծարավը: Ութերորդ օրը նրանք այլեւս չէին գնում ավազանից ջուր բերելու, այլ միայն համախմբվում էին տաճարում: Հիսուս եւս, ինչպես արդեն տեսանք, գտնվում էր տոնախմբության վայրում: Տեսնելով եւ վերլուծելով ողջ կատարվածի ունայնությունը՝ զգում է մարդկանց հոգու ծարավը դեպի Աստված, դեպի Արարիչը, բայց նաեւ զգում է, թե մարդ արարածը որքան է շեղվել ճշմարիտ ուղուց եւ տեղից վեր կենալով՝ բացականչում է. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա եւ խմի», ցույց տալով, որ երկնային կյանքի աղբյուրը Իրենից է հոսում եւ Իրեն հավատալով եւ մոտենալով է, որ մարդիկ իրական կերպով կհագեցնեին իրենց հոգու ծարավը:

Սիրելիներ, դուք բոլորդ էլ տեսած կլինեք թերեւս ձեր այգում կամ մի ուրիշ տեղ, թե ինչ-

պես հողը, երբ երկար ժամանակ չի սնուցվում ջրով, սկսում է ճաքճքել եւ ամայանալ: Նույնպես նաեւ բնությունը, երբ չի սնուցվում ջրով, սկսում է թորշոմել եւ մեռնել: Մարդու ծարավը նման է հողի ծարավին, որովհետեւ մարդ եւս հողից է արարված, սակայն մարդը, ինչպես գիտենք, նաեւ հոգեւոր արարած է, ունի երկրորդ ծարավը՝ մշտական ծարավը իր Արարչի՝ Աստծու: Աստծու հավատքը, ծարավը մարդու մեջ բնութենական է, այսինքն կապված է մարդու բնության հետ, ինչպես որ ջրի ծարավն է բնութենական եւ կենսական:

Քրիստոս, երբ աշխարհ եկավ, աշխարհը հեթանոսության, կռապաշտության, բազմաստվածության ահավոր խավարի մեջ էր գտնվում: Քրիստոս Ինքը բերեց միակ ճշմարիտ Աստծո ճանաչումը ոչ միայն որպես ամենազոր արարիչը տիեզերքի, այլեւ ու մանավանդ իբրեւ երկնավոր բարեգութ Հայր, իբրեւ լույս, իբրեւ կյանք, իբրեւ սեր: Ինքն էր այդ միակ ճշմարիտ եւ կյանքի աղբյուր հանդիսացող Աստծու մարմնացյալ հայտնությունը երկրի վրա:

Միակ ճշմարիտ Աստծու ճանաչումը, սակայն միայն դավանանքով չէ, որ պիտի արտահայտվի: Այլ այն պիտի դառնա կյանք, գործ: Աստծուն ճանաչել, նշանակում է Նրան սիրել ամբողջ սրտով, ողջ զորությամբ: Բայց այս ամենին հասնելու համար պետք է Աստծու կամքի համաձայն ապրենք ու գործենք, մտածենք ու խոսենք: Ով որ սիրում է Աստծուն ճշմարտապես՝ չի կարող Աստծու կամքին հակառակ ընթացք ու կենցաղ ունենալ. չի կարող աստվածահաճո կյանքի ուղուց դուրս գալ եւ Աստծու պատկերը կրող իր եղբորը, իր բարեկամին ատել, նրան նախանձել, նրա ունեցածը գողանալ եւ հատկապես նրան սպանել, չի կարող բարոյական սկզբունքների դեմ գործել եւ անբարո կենցաղ ունենալ:

Աստծու այս ճշմարիտ ճանաչումի մեջ, երբ հավատանք ու մոտենանք Հիսուս Քրիստոսին եւ Նրա մարմինն ու արյունը իբրեւ ճշմարիտ կերակուր եւ ճշմարիտ ըմպելիք ընդունենք ու ճաշակենք, այն ժամանակ միայն կհասկանանք եւ կլսենք աստվածային այն պատգամը, թե «ով Ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»:

Պողոս առաքյալը, մեկնելով Մովսեսի՝ հրեա ժողովրդին անապատով առաջնորդությունը, գրում է. «Եւ բոլորն էլ նույն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմում էին հոգեւոր այն վեմից, որ գնում էր նրանց հետ եւ այն վեմը Ինքը՝ Քրիստոսն էր» (Ա. Կորնթ. Ժ. 2-4): Անտեսանելի Քրիստոս, որպես վեմ, հագեցրեց անապատում դեգերող ժողովրդի ծարավը, բայց նրանք հաճելի չեղան Աստծուն, ինչպես գրում է Պողոս առաքյալը, որովհետեւ դրդեցին Նրա դեմ: Տեսանելի Քրիստոս, որպես իրականություն, մարդկանց հայտնվեց տաճարում եւ նրանց հոգեւոր ջուր առաջարկեց, սակայն այստեղ էլ Իրեն չհավատացին: Իսկ Հարություն առած Քրիստոս Իր կյանքի պատմությունը եւ վարդապետությունը թողեց մեզ՝ Իր Հարությունից հետո, կատարելով Իր խոստումը, Ս. Հոգին ուղարկեց առաքյալների վրա, եւ նրանց միջոցով՝ Ս. Եկեղեցուն, որպեսզի այն իբրեւ կյանքի ջուր ըմպելով՝ մաքրագործվենք, սրբանանք եւ հասնենք փրկագործության:

Սիրելի հավատացյալներ, այսօր, երբ նայում ենք մեր շուրջը, մեր ժողովրդին, շատ հստակ եւ պարզ տեսնում ենք, թե ինչպես են մարդիկ ձգտում հագեցնել իրենց հոգեւոր ծարավը Կյանքի Ջրով, հոգեւոր վերարթնությունը ակնհայտ է: Դեպի Աստված, դեպի աստվածայինը մեր ընթացքը իրական է հատկապես երիտասարդ սերունդի մոտ: Այլեւս չկա այն մտահոգությունը, որ Հայաստանում մեր ժողովրդին յոթանասուն տարիներ զրկել են Աստծուն մոտենալուց եւ կյանքի ջուրը խմելուց: Յոթանասուն տարիները ոչինչ են 1700 տարի-

ներից ավելի այդքան զորեղ քրիստոնեական հավատքի դիմաց, որ ունեցել եւ իրականորեն ապրել է մեր ժողովուրդը: 70 տարիների ծարավը անկարող է 1700 տարիների առատությունը ջնջել կամ սրվերի տակ գցել: Եթե ճշմարիտ կերպով հաղորդակից ենք մեր պատմությանը՝ այսօր պիտի այդ քրիստոնեական ինքնությունը վերաբյուրեղացնենք, վերարժեւորենք եւ զորացնենք, որպեսզի Ս. Հոգու շնորհները լինեն մեզ վրա եւ մեր ներսից կենդանության աղբյուրներ բխեն:

Աստված մեզ հետ եղավ դարեր շարունակ, թե՛ փառապանքի, թե՛ հաղթանակի, թե՛ խաղաղության եւ թե՛ խռովության ժամանակ: Աստված մեզ հետ է նաեւ այսօր: Աստծու մեզ հետ լինելու գիտակցությունը առավել ուժեղ եւ ներգործուն է դառնում այն ժամանակ, երբ մենք էլ մեծ ջանքեր ներդնելով՝ փորձենք լինել Աստծու հետ:

Մեր Տերը եւ Տիրոջ հավատարիմ առաքյալները հաստատեցին Ս. Առաքելական Եկեղեցին՝ որպես Կենդանի Ջրի սառնորակ եւ կենարար աղբյուր: Եկեղեցու կոչնակները կանչում են մեզ ամեն Աստծու օր կենդանի ջրով հագեցնելու մեր հոգու ծարավը: Եւ այստեղ է, որ Տիրոջ խոսքն ամբողջացնում է աստվածային ճշմարտությունը մեր կյանքից ներս. «Ով Ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրեր պիտի բխեն»:

Սիրելի հավատավոր զավակներ մեր Ս. Եկեղեցու, արդեն ավելի քան հազար եւ յոթ հարյուր տարիներ շարունակ Հայոց աշխարհի համար եւ համասփյուռ հայության համար Տիրոջ կողմից հաստատված այս կենսատու աղբյուրը՝ Եկեղեցին հայոց, ցավերից ու կրակներից, երբեմն անգամ ավերված ու անմխիթար, սակայն միշտ էլ պատրաստակամ ու ջերմեռանդ կերպով մեր ծարավ հոգիների համար աստվածային ջուր է բխեցնում իր մաքրամաքուր ակունքներից: Եւ ներող ու մեծասիրտ հոր պես, գթառատ ու սիրող մոր նման շշնջում է. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա եւ խմի»:

Արարիչն Աստված, Հայրն Ամենազոր, Փրկիչ Որդին եւ Շնորհաբաշխ Ս. Հոգին թող արթնություն սփռեն մեր հոգիների վրա, որ երբեք չանտեսենք հոգու տենչը եւ թող Տերը օրհնի Հայոց կենսատու աղբյուրը՝ Հայ Եկեղեցին, որպեսզի հայոց զավակների ներսից կենդանի ջրեր բխեն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն: